**ԲԱՑԱՏՐԱԳԻՐ**

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ՏՐԱՎԵՐՏԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՎԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՄՐՈՑԱՍԱՐԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2025Թ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տեղամասը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքում, Արարատ քաղաքից մոտ 1200մ դեպի հյուսիս հյուսիս-արևելք, իսկ Արարատ բնակավայրի մոտակա շինությունից 180մ արևելք (նկ.1):

Տեղամասի տարածքը զբաղեցնում է 1.43հա և սահմանափակված է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ըստ Arm WGS-84 համակարգի).

1. Y=8474425.5064 X=4413722.5133,
2. Y=8474458.2826 X=4413756.1467,
3. Y=8474480.2480 X=4413778.2502,
4. Y=8474488.5539 X=4413786.4332,
5. Y=8474501.0000 X=4413785.0000,
6. Y=8474470.1498 X=4413904.9125,
7. Y=8474522.3920 X=4413943.2598,
8. Y=8474600.0000 X=4413910.0000,
9. Y=8474602.2217 X=4413883.7096,
10. Y=8474590.6644 X=4413885.9722,
11. Y=8474567.7297 X=4413908.2889,
12. Y=8474516.6701 X=4413880.1496,
13. Y=8474511.3906 X=4413844.0909,
14. Y=8474525.0731 X=4413819.9770,
15. Y=8474527.8885 X=4413782.4748,
16. Y=8474517.9977 X=4413762.4177,
17. Y=8474504.2333 X=4413746.3141,
18. Y=8474508.5211 X=4413709.0125,
19. Y=8474546.3899 X=4413660.8931,
20. Y=8474547.1610 X=4413648.9615,
21. Y=8474542.3379 X=4413649.9971,
22. Y=8474425.5064 X=4413722.5133

Աշխարհագրական կոորդինատներն են.

39051/24//- հյուսիսային լայնության

44042/19// - արևելյան երկայնության:

Սույն հաշվետվությունում ամփոփված են 2025թ. ընթացքում տեղամասում և մերձակայքում իրականացված հողի, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի մշտադիտարկումների արդյունքները:

Հանքավայրի իրավիճակային սխեման նմուշառման կետերով ներկայացված է նկ.1-ում:




*Նկ.1: Տեղամասի տեղադիրքի և մշտադիտարկումների կետերի սխեմատիկ քարտեզ:*

## 1. Տեղամասի երկրաբանական կառուցվածքը

Տեղամասը հանդիսանում է Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի հարավ-արևմտյան մասը և ունի շատ պարզ երկրաբանական կառուցվածք:

Հիմնական ապարները ներկայացված են հարավարևմտյան ուղղությամբ թեքվող միջին չորրորդական հասակի տրավերտիններով:

Տրավերտինները թիկնոցաձև, աններդաշնակորեն ծածկում են ստորին չորրորդականի հասակի շեկ մերգելային կավերին, որոնց հզորությունը հասնում է 8-12մ:

Չորրորդականի հասակի կավերը իրենց հերթին աններդաշնակորեն ծածկում են վերին օլիգոցենի կարմրավուն կավերին:

Տրավերտիններն ունեն 5-22մ հզորություն: Նրանք շերտի վերին մասում ճեղքավորված են և ունեն գորշ գունավորում: Միջկոնտակտային տրավերտինները հաճախակի բաժանվում են ենթաշերտերի:

Ենթաշերտերը միմյանցից բաժանվում են 0.1-0.5մ հզորությամբ, հորիզոնական տեղադրված կավային շերտերով, որոնք տարածվում են միջկոնտակտային երկայնական ճեղքերով:

## 2. Երկրաձևաբանություն

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրը տեղադրված է Արաքս գետի հարթավայրի ցածրադիր ռելիեֆի վրա բարձրացող բարձունքի լանջերի վրա (860-890մ), և արևելքից ու հյուսիս-արևելքից սահմանափակվում է Ուրցի լեռնաշղթայի բարձր լեռնաճյուղով:

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տրավերտինների տեղամասում, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինը գտնվում է 9.1կմ հեռավորության վրա:

Տեղամասում իրականացվող արդյունահանման աշխատանքները չեն կարող ազդել սողանքների ակտիվացման վրա:

## 3. Տեղամասում իրականացվող արդյունահանման աշխատանքների բնութագիրը

Տրավերտինների հաստաշերտի մշակման ժամանակ բլոկների արդյունահանման աշխատանքները կատարվում են բարձրաստիճան միակողանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, մակաբացման ապարներն նախ արտաքին ապա հետագայում ներքին լցակույտ տեղափոխելով:

Միաքարի արդյունահանման աշխատանքները կատարվում են ալմաստաճոպանային քարհատ մեքենայի միջոցով: Քարհատ մեքենայի ճոպանը թելելու համար անհրաժեշտ ուղղաձիգ հորատանցքերի հորատումը կատարվում է հորատման հաստոցի միջոցով:

Բլոկների (մեծ աղյուսների) արդյունահանումը զանգվածից ընդգրկում է հետևյալ արտադրական գործողությունները.

միաքարի առանձնացումը զանգվածից,

միաքարի հեռացնելը հանքախորշից,

միաքարի մասնատումը ապրանքային բլոկների,

Բլոկների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:

Հաշվետու տարում հանքավայրից արդյունահանվել է 1.819$մ^3$ օգտակար հանածո, որի ժամանակ հեռացվել է 0.278 հազ. $մ^3$ մակաբացման ապար:

Տարվա շոգ և տաք օրերին կատարվել է փոշենստեցում ջրցանման եղանակով:

## 4.Հողային ծածկույթ

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի այդ թվում Ամրոցասար տեղամասի ռելիեֆի մակերևույթ գրեթե ամբողջությամբ խախտված է: Հողաբուսական շերտը հիմնականում բացակայում է, կղզյակների տեսքով կարելի է հանդիպել հողմահարված տրավերտինների բեկորներով ու ավազացված զարգվածով ցեմենտացված դելյուվիալ նստվածքներ: Քարքարոտ էռոզացված կիսաանապատային լանդշաֆտներ են:

Առանձին տեղերում, որտեղ հողաբուսական շերտը պահպանվել է ունի մինչև 20սմ հզորություն:

Հողերը կավավազային կարբոնատացված հողեր են կնձկային ստրուկտուրայով, որտեղ կարբոնատի պարունակությունը հասնում է մինչև 25%:

Քայուղերով, նավթամթերքներով և այլ թափոններով տարածքը աղտոտված չէ:

## 5. Օդային ավազան

Ամրոցասարի տեղամասին ամենամոտ գտնվող մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայանը գտնվում է Արարատ քաղաքում: Կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ:

Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 12 դիտակետ:

Օդի արտանետումների միջինացված քանակները ներկայացված են մշտադիտար-կումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաղորդում (2025թ.):

Տեղամասում իրականացված արդյունահանման աշխատանքները նախատեսված ծավալներից շուրջ 5 անգամ պակաս է:

Արդյունահանման աշխատանքների ժամանակ առաջացած փոշու և ծխագազերի չափաքանակները գտնվում են ՍԹԿ-ների սահմաններում:

## 6.Բուսական և կենդանական աշխարհ

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տեղամասը մտնում է Երևանի ֆլորիստիկ շրջանի մեջ:

Բուսական աշխարհը ներկայացված է կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և

հալոֆիլ, գիպսաֆիլ անապատային բուսատեսակներով: Տիրապետող բույսը հոտավետ օշինդրն է, տարածված բուսատեսակներից են՝ կապարը, կոխիան, նոնեան, լերդախոտը, բորբոսատեսուկը և դաշտավլուկը:

Արարատյան գոգավորության անապատային գոտու կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատո սցինկը, օձերից՝ կույր օձուկը:

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրը շահագործվում է 1960-70 ական թվականից բազմաթիվ ընկերությունների կողմից, այստեղ ձևավորվել է խիստ խախտված տեխնածին ռելիեֆ:

Առկա են բազմաթիվ բացահանքեր, արտադրական հրապարակներ, լցակույտեր, այդ թվում՝ բազմաթիվ տիրազուրկ, չկառավարվող հանքեր և ենթակառուցվածքներ:

Քանի որ շրջակայքը ծանրաբեռնված է արտադրական գործունեությամբ, հողային ծածկույթ դեգրադացված է, ինչը սահմանափակում է բուսական շերտի ձևավորման հնարավորությունը:

Տեղամասում կենդանիների որջեր կամ բնադրավայրեր չեն դիտարկվել: Պարբերաբար հանդիպել են սովորական դաշտամուկ, թռչուններից՝ արտույտ, սովորական քարաթռչնակ, ագռավ և տնային ճնճղուկ, սողուններից՝ զոլավոր մողես ինչպես նաև կարիճ և մրջյուններ:

Տեղամասի տարածքում Կարմիրգրքային բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչներ չեն նկատվել:

Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տրավերտին-ների տեղամասի շրջանում են գտնվում բնության հատուկ պահպանվող երեք տարածքներ՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը:

Տեղամասին ամենամոտը «Գոռավանի ավազուտներ» արգելավայրն է՝ գտնվում է 3.3կմ հյուսիս-արևելք: Տեղամասում իրականացված արդյունահանման աշխատանքները որևէ կերպ չեն ազդել արգելավայրի էկոհամակարգի վրա:

Ամրոցասարի տեղամասի տարածքը գտնվում է պատմության և մշակույթի հուշարձաններից 0.6-1կմ հեռավորության վրա, հետևաբար, դրա շահագործումը չի ազդել պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

Մշտադիտարկումների համար ելակետային տվյալները վերցված են ՇՄԱԳ հվետվությունից:

***Հաշվետվությունն ու բացատրագիրը կազմեց ԱՁ Շ.Խաչատրյանը***